Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի

տնօրեն ակադեմիկոս Թ. Սաֆրաստյան

13.07.2020 թ.

ԿԱՐԾԻՔ

Սարգիս Մանվելի Բալդարյանի «Հայկական վաճառականական ձեռնարկները Նոր Ջուղայի առևտրական ցանցում» ատենախոսության վերաբերյալ՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի կողմից՝ 13.07.2020 թ. նիստից:

Բաժնի նիստի քննարկմանը ներկա էին և ելույթ ունեցան. ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր, Վահան Բայբուրդյանը, բ.գ.դ., առաջատար գիտաշխատող Արմանուշ Կոզմոյանը, պ.գ.թ., ավագ գիտաշխատող, Ն. Նավասարդյանը, բ. գ. թ. ավագ գիտաշխատող Ա. Իսրայելյանը:

XVII դարի հենց արշալույսի Արևելյան Հայաստանի բնակչության բռնի զանգվածային տեղահանության Իրան և պատերազմների հետևանքով հայ ժողովրդի բնօրրանի ամայացման հետևանքով այդ երկրամասի առևտրատնտեսական կյանքը կտրուկ խամրեց: Ուստի հայ առևտրական բուրժուազիան, ամեն տեսակ գործարար տարրերն իրենց գործունեության ասպարեզ կարող էին դարձնել գաղթաշխարհը, որոնց մեջ հայության կյանքում բացառիկ կարևոր դեր էր խաղալու իրանահայ գաղութը և մասնավորապես Նոր Ջուղայի գաղթօջախը:

Հայ առևտրական կապիտալի, կամ ինչպես Լեոն էր անվանում՝ «խոջայական կապիտալի» պատմությանը նվիրված են հայ և օտարազգի հեղինակների բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ: Սակայն պետք է խոստովանել, որ համեմատաբար սակավ են հայկական վաճառական ձեռնարկների հատուկ ազբյուրագիտան-քննական ուսումնասիրությունների թիվը: Հետևաբար, Սարգիս Բալդարյանի ատենախոսություն անկասկած իր կարևոր նպաստը կարող է բերել հայ ժողովրդի տնտեսական կյանքի պատմության, մասնավորապես վաճառականության կարևոր դրվագների վրա նոր լույս սփռելու հույժ կարևոր գործին:

Ատենախոսն իր առջև նպատակ է դրել համակողմանի և մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկել Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցի առևտրական դասընթացի հեղինակ Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկ-դասագրքերը, որպես հայ վաճառականական գրականության նմուշներ: Ատենախոսը միանգամայն իրավացի է, որ հայկական վաճառականական ձեռնարկների լիարժեք ուսումնասիրությունն ինչպես իր նպաստը կարող է բերել հայ բնագրագիտությանը, այնպես էլ հետաքրքրական ու օգտակար կարող է լինել համաշխարհային առևտրի պատմության մասնագետների համար:

Հետազոտությունն իրականացնելիս ատենախոսն իր առջև դրել է ծավալուն նպատակներ և խնդիրներ, որոնք առաջին հերթին կոչված են հայկական վաճառականական ձեռնարկեներն ուսումնասիրելու միջոցով ցույց տալ այն վիթխարի դերը, որն ունեցել է հայ առևտրական կապիտալի առաջամարտիկը հանդիսացող Նոր Ջուղան համաշխարհային առևտրական ցանցում:

Մեր կարծիքով՝ ատենախոսության կարևորագույն արժանիքներից մեկն այն է, որ հեղինակն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել Կոստանդ Ջուղայեցու երկերի հիշատակարաններում ամփոփած նյութերը, ինչպես նաև հայկական վաճառականական ձեռնարկները դիտարկում է եվրոպական առևտրական երկերի համապատկերում:

Սարգիս Բալդարյանի ատենախոսությունը շարադրված է արխիվային նյութերի, ձեռագրերի և ուսումնասիրությունների լայն հետազոտության միջոցով: Հեղինակը կատարել է բնագրագիտական մեծ աշխատանք: Ատենախոսությունն արժևորվում է նաև նրանով, որ հեղինակը ուսումնասիրել և ի մի է բերել Երևանի, Նոր Ջուղայի, Օքսֆորդի, Վենետիկի և Վիեննայի արխիվներում պահվող փաստաթղթերի հավաքածուները, որոնք հնարավորություն են ընձեռել ներկայացնելու Կոստանդ Ջուղայեցու գրավոր ժառանգության ամբողջ էությունը: Ուշագրավ է ատենախոսի այն դիտումը, որ Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թոյ և դրամից բոլոր աշխարհի» ձեռնարկը հավանաբար շարադրվում է Կոստանդ Ջուղայեցու առևտրական դասագրքերի նախօրինակների հիման վրա: Չի կարելի չհամաձայնվել ատենախոսի այն մտքի հետ, որ սույն աշխատությունը նորահայտ տվյալներով հարստացնում է մեր ունեցած սուղ տեղեկությունները Կոստանդ Ջուղայեցու կյանքի տարբեր դրվագների վերաբերյալ, միաժամանակ լույս սփռելով նրա կողմից առևտրական երկեր գրելու շարժառիթների վրա:

Ատենախոսությունը շարադրելիս հեղինակը օգտագործել է տարբեր գրադարաններում և պահոցներում գտնվող տարբեր ձեռագիր և տպագիր սկզբնաղբյուրներ, փաստաթղթեր և ընդարձակ գրականություն տարբեր լեզուներով, որոնց մի մասն առաջին անգամ է մտցվում գիտական շրջանառության մեջ:

Սարգիս Բալդարյանի ատենախոսության վերաբերյալ կան որոշ նկատառումներ.

1. Նպատակահարմար կլիներ , եթե հեղինակն աշխատության առաջին գլխում, թեկուզ մեկ համառոտ ենթագլխի շրջանակներում, առանց ավելորդ մանրամասների, ներկայացներ պատմական այն ֆոնը, որի պայմաններում ապրել և գործել է իր հետազոտության օբյեկտ Կոստանդ Ջուղայեցին և միաժամանակ ցույց տրվեր այն կարևորագույն դերը, որն ունեցել է իրանահայ առևտրական բուրժուազիան հայ իրականության մեջ կապիտալի նախասկզբնական կուտակման գործում, ինչպես նաև համաշխարհային առևտրի մեջ:
2. Անդրադառնալով հայկական վաճառականական ձեռնարկների ուսումնասիրության հարցին, մասնավորապես Կոստանդ Ջուղայեցու թողած ժառանգությանը՝ ատենախոսը հիշատակում է լոկ հինգ-վեց հեղինակների անուններ: Մինչդեռ անցյալի և ներկայիս բազմաթիվ հայ և օտարազգի հեղինակներ մեծ կամ փոքր չափով անդրադարձել են այդ հարցին, կատարել ընդարձակ հողումներ, արժևորել Կոստանդ Ջուղայեցու հարուստ ժառանգությունը և այլն:
3. Կա որոշակի հակասություն, երբ ատենախոսն իր աշխատանքը գնահատում է որպես հայկական վաճառականական ձեռնարկ-դասագրքերը ուսումնասիրության անդրանիկ փորձ, քանի որ աշխատանքում բերվում են օրինակներ, որ այդ պատիվը պատկանում է նաև այլ հետազոտողների և առաջին հերթին Լևոն Խաչիկյանին, Հակոբ Փափազյանին և այլոց: Սակայն նման մոտեցումը բնավ չհամարելով դիտավորություն, դիտարկում ենք որպես վրիպում, հատկապես որ հենց ինքը՝ ատենախոսը նշում է, որ դեռևս 1980-90-ական թվականներին Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը հրատարակել է «Տնտեսական պատմության վավերագրեր» շարքի երեք առանձին հատորներ:

Հավաստիացնում ենք, որ վերոնշյալ դիտարկումները դյուզն ինչ չափով չեն ազդում Սարգիս Բալդարյանի շահեկան և արժեքավոր աշխատության ընդհանուր որակի վրա: Նրա ներկայացրած ուսումնասիրությունը ավարտուն ու արժեքավոր գործ է, որն անկասկած գալիս է հարստացնելու հայ առևտրական կապիտալի

պատմագրությունը: Կասկածից վեր է նաև, որ ատենախոսը կատարել է տարիների քրտնաջան աշխատանք՝ դրսևորելով լայնախոհ հետազոտողի ընդունակություններ:

Սարգիս Մանվելի Բաղալյանի «Հայկական վաճառականական ձեռնարկները Նոր Ջուղայի առևտրական ցանցում» ատենախոսությունը շարադրված է գիտական և տեսական բարձր մակարդակով, և նրա հեղինակը արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի

Իրանի բաժնի վարիչ պ.գ.դ. պրոֆեսոր Վ. Բայբուրդյան

Նիստի քարտուղար՝ պ.գ.թ. Նազելի Նավասարդյան

13.07.2020 թ.

Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի

գիտն.քարտուղար պ.գ.թ. Գ. Մարգարյան

13.07.2020թ.